

Վ Ա Ն Կ ՈՒ Լ Ի Ն Ե Ր Ը

(Հայ—Քիւրդական բանակը. Ձիւնուրական կես-իշխանութիւն հանդէպ Պարսկաստանի. պատանդի սովորութիւններ. ժողովուրդներու իրաւունքների պաշտպանութեան ձեւը՝ հանդէպ իրենց կառավարիչներու ոտնձգութիւններուն :)

Վանկուլի կը կոչուէին այն գլխաւորները որոնք կազմեր էին երկու հազարի մօտ հեծեկազօրաց բանակ, կը տիրապետէին Հայաստանի ու Քիւրդիստանի Օսմ. կառավարութեան վեհապետական իշխանութեան տակ. կառավարութիւնը ապահովցնելու համար պատանդներ կը թողնէին Կ. Պոլսի մէջ : (*)

Հայ Վանկուլիների գլխաւորներէն առ այժմ յայտնի են, Պոչովեանները, Գարասէֆէրեանները, Թորոմանեանք, Պարոն Կարապետ : (**)

(*) Գարասէֆէրեանները Վանկուլիների իշխանութենէն մնացած այն ցեղն են, որոնց պատանդները գլխատուած են Կ. Պոլսի մէջ : Գլխատուութիւնը տեղի կ'ունենար հին ժամանակի այն պայմաններու մէջ, որ երբ դրժէին իրենց գերիշխողներու հովանաւորութիւնը՝ իրենց պատանդները կը սպանուէին :

Այս պատանդներու գերեզմանները կը գտնուին այժմ Պոլսի Բանկալ թիւ գերեզմանատունը, շիրիմները իրենց ըմբօստ յիշատակարաններն ունին : Վանեցի Յարութիւն ազա՝ որի պապն է ստացել այդ գերեզմանատունը՝ Կ. Պոլսի Թագաւորէն, սպանուեր է իբր պատանդ, մինչ ներկայ Թուրքիան 220 տարուայ պատմութիւն կը լինի : Շիրիմներու վրայ սնունց ամեն շէջը փորագրուած է կտրուած գլուխներով, երեք են շիրիմները, և հասարակութեան լեզուով կը կոչուին կտրուած գլուխներու գերեզմանները :

(**) Պարոն Կարապետը ունեցեր է մարդ կախելու իրաւունք, Նահպագեաններու ազգականներէն է. իրենց տունը որ այժմ ուրիշներ կը բնակուին, մինչ ցարդ կը կոչուի Պարոնեց տուն, Վանի Ալգեստաննէն թաղի մէջ :

Պարոն Կարապետը որ սարսփ ազդեր էր Քիւրդ Տէրէպէլիներուն, մեռնելէն անմիջապէս վերջ, Քիւրդ պէյերը կը յարձակուին անոր տան վրայ, կը յափշտակեն Գեղեցկութեան անուն համաձայն կիներ, ու իրենց ալ իրար կը կոտորեն, ամէն մէկը ախաւսելով ինքի տիրանալու :